



Համարը N 2081-Ն
Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2003.01.29/6(241) Հոդ.89
Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ
Վավերացնող մարմինը ՀՀ Նախագահ
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 30.01.2003

Տեսակը Հիմնական
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան
Ընդունման ամսաթիվը 19.12.2002
Ստորագրման ամսաթիվը 25.12.2002
Վավերացման ամսաթիվը 28.12.2002
Ուժը կորցնելու ամսաթիվը

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՔԻՄԲԵՐԼԵՅ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վավերացնում եմ»
 Հայաստանի Հանրապետության
 Նախագահ Ռ. Քոչարյան
 28 դեկտեմբերի 2002 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 դեկտեմբերի 2002 թվականի N 2081-Ն

ՔԻՄԲԵՐԼԵՅ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետությունում աղամանդագործության ոլորտի հետագա կայուն զարգացման անհրաժեշտությունից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Միանալ կոնֆլիկտային աղամանդների ապօրինի շրջանառության կանխման նպատակով գործող Քիմբերլեյ գործընթացին:
2. Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարին՝ մեկամսյա ժամկետում ապահովել Քիմբերլեյ գործընթացին Հայաստանի Հանրապետության կառավարության միանալու հետ կապված միջոցառումների իրականացումը:
3. Քիմբերլեյ գործընթացի կանոնակարգերով սահմանված լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարությանը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Ա. Մարգարյան

2002 թ. դեկտեմբերի 25
Երևան